



Հայաստանի Հանրապետության ոստիկանություն



Տպագրվում է 1990 թվականից

13 (1412) • 12 ապրիլի 2019 թ. • Գինը՝ 150 դրամ

Շաբաթաթերթ

www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am

Ընդունելություն ոստիկանությունում

Ապրիլի 10-ին ՀՀ ոստիկանության շտաբի պետ Արմեն Դուկասյանն ընդունեց թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության եվրոպայի, եվրասիայի, Կենտրոնական Ասիայի ծրագրերի ղեկավար Ջուդիթ Բենբլին, ՀՀ-ում ԱՄՆ դեսպանության թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության ծրագրի տնօրեն Մայքլ Հուլմանին, նույն ծրագրի իրավապահ գործերով ավագ խորհրդատու Ադի Նոլդվեյնի և համակարգող Մարիցա Նովիանսկայանին:



Ողջունելով հյուրերին՝ Արմեն Դուկասյանն ընդգծեց համագոր-

ծակցության կարևորությունն ու արդյունավետությունը, նաև ներկայացրեց դրա շնորհիվ կատար-

ված մայրաքաղաքում ստեղծվելիք շարժական պարեկային ծառայության, օպերատիվ կառավարման նոր կենտրոնի կազմավորման և դրանց ստեղծմանն աջակցելու վերաբերյալ հարցերի մասին:

Անդրադարձ եղավ նաև ոստիկանության կադրային քաղաքականության, ոստիկանության հանդեպ հասարակության վստահության և ծառայություններում կանանց ներգրավվածության խնդիրներին: Հանդիպմանը մատնանշվեցին համագործակցության հետագա ուղղություններն ու քննարկվեցին փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող այլ հարցեր:

Ոստիկանություն ընդունվողների աճ է գրանցվել

Ոստիկանությունում ծառայելն օրեցօր ավելի պատվաբեր, բայց նաև դժվար ու պատասխանատու է դառնում: Խնդիրը միայն նոր ժամանակների նոր մարտահրավերները չեն: Դա պայմանավորված է նախևառաջ ոստիկանության հանդեպ հասարակության աճող վստահությամբ, որը համարժեք աշխատանք ու ծառայություն է պահանջում: Եվ ոստիկանությունն անուն է ամեն ինչ՝ քաղաքացու վստահությունն արդարացնելու համար:



Իսկ վիճակագրությունը փաստում է, որ միայն վերջին երեք ամիսներին ոստիկանության համակարգ է ընդունվել 71 շարքային: Սա 51 տոկոսով ավելի է անցած տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ: Երեք ամսում ոստիկանության համակարգում ծառայության է վերականգնվել 123 ծառայող՝ 62-ով ավելի անցած տարվա նույն ժամանակահատվածի համեմատ: Նվազում կա ոստիկանությունից ազատվածների թվում: Եթե անցած տարի երեք ամսվա ընթացքում ոստիկանության համակարգից ազատվել էր 118 սպա, ապա այս տարի նրանց թիվը 97 է: Անցած տարվա նույն ժամանակահատվածում ազատվել է 194 շարքային, այս տարի՝ 113:

Թվերն ինքնին խոսում են և վկայում են հանրային իրավագիտակցության բարձրացման ու համաքաղաքացիների վստահությանը համարժեք ծառայելուն ոստիկանության պատրաստակամության մասին:

Սպանությունը բացահայտվեց

Ծեծ՝ մահվան ելքով

Ապրիլի 7-ին ոստիկանության Թումանյանի բաժնում սպանության դեպք գրանցվեց: Կատարվածը սահմանակցուցիչ էր. 44-ամյա տղամարդուն ոչ միայն դանակով սպանել էին, այլև հետքերը թաքցնելու նպատակով բենզինով այրել: Այս ամենը պարզվեց հետո: Իսկ մինչ այդ, ապրիլի 5-ին ոստիկանության Մալաթիայի բաժնում մի տղամարդուց հաղորդում ստացվեց, որ նախորդ օրը եղբայրը՝ Երեանի Բաբաջանյան փողոցի բնակիչ Արսեն Սարգսյանը, իր մեքենայով մեկնել է Սպիտակ և չի վերադարձել: Անհետ կորածի վերաբերյալ կողմնորոշումներ ուղարկվեցին ոստիկանության ստորաբաժնումներին:



Ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր և Լոռու մարզային վարչությունների, Ստեփանավանի և Թումանյանի բաժնիների ծառայողները ձեռնարկեցին օպերատիվ-հետախուզական միջոցառումներ, որոնց արդյունքում ապրիլի 7-ին Լոռու մարզի Աբրի բնակավայրում հայտնաբերվեց Արսեն Սարգսյանի «Մերսեդես Բենց» մակնիշի մեքենան, որը վարում էր

Ալավերդի քաղաքի բնակիչ Կամո Կիրակոսյանը: Մեքենայում կային արյան հետքեր: Կամո Կիրակոսյանը, «Մերսեդես»-ով հանդերձ, բերման ենթարկվեց ոստիկանության Թումանյանի բաժնի, որտեղ էլ խոստովանեց կատարածը: Ապրիլի 4-ին Կամո Կիրակոսյանը երեւանում մտնել էր Արսեն Սարգսյանի «Մերսեդես»-ը և պատվիրել, որ իրեն տանի Վանաձոր:

Ժամը 20.30-ի սահմաններում Վանաձորի սկզբնամասում գումարային հարցերի շուրջ վիճել էին, այդ ընթացքում Կիրակոսյանը Սարգսյանի ձեռքից խլելով դանակը՝ մի քանի անգամ խփել էր նրա գլխին և սպանել: Սպանությունից հետո դիակը նույն մեքենայով տեղափոխել էր Հաղպատ բնակավայր՝ «Դսեւանք» տարածք: Գետի մոտ բենզին լցնելով այրել էր, կիսայրված դիակը մեքենայի բեռնախցիկում, սավանի մեջ փաթաթված, տեղափոխել էր Աբրի բնակավայրի «Տափի դուզ» տեղանք, ծածկել հողով ու չորացած տեղերներով:

Հարուցվել է քրեական գործ: Կամո Կիրակոսյանը կալանավորված է:

Մարտի 30-ի կեսգիշերին հիվանդանոցից ոստիկանության Կենտրոնական բաժնում հաղորդում ստացվեց, որ Պարոնյան փողոցից մի տղամարդ է տեղափոխվել հիվանդանոց ակտիվային ինտոքսիկացիա ախտորոշմամբ: Մարմին է վնասվածքներ էին հայտնաբերվել: Համաներմամբ ազատված 33-ամյա Կարեն Ավետիսյանը ապրիլի 1-ին, գիտակցության չզալով, հիվանդանոցում մահացավ:



Ոստիկանության Կենտրոնական բաժնի քրեական հետախույզները տարաբնույթ միջոցառումների արդյունքում պարզեցին, որ մահացած տղամարդը հիվանդանոց տեղափոխվելու օրը վիճել էր Երեանի բնակիչներ Վազգեն Գեւորգյանի և Արսեն Օհանյանի հետ: Դեպքը տեղի էր ունեցել նրանց ընդհանուր ծանոթներից մեկի բնակարանում, որտեղ ակտիվ էին օգտագործել: Կենցաղային հարցերի շուրջ վեճ էր սկսվել, Վազգեն Գեւորգյանն ու Արսեն Օհանյանը խփել էին Կարեն Ավետիսյանին պատճառելով մարմնական վնասվածքներ:

Կենտրոնականի ոստիկանները Վազգեն Գեւորգյանին հայտնաբերեցին ապրիլի 1-ին ու կասկածաբար բերման ենթարկեցին: Հարուցված քրեական գործը փոխանցվեց տարածքային նախաքննական մարմնին: Ապրիլի 2-ին հայտնաբերվեց նաև Արսեն Օհանյանը: Նախաքննությունը շարունակվում է:

Հանցավոր խումբը վնասագերծվեց

Վերջերս ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչությունում օպերատիվ տեղեկություններ ստացվեցին, որ մի խումբ անձինք ստեղծել են կազմակերպված կայուն խումբ և գողություն են անում:



Հանցավոր խմբին բացահայտելու, հանցափաստումներ կատարելու և խմբի բոլոր անդամներին հայտնաբերելու համար ձեռնարկվեցին ծավալուն օպերատիվ-հետախուզական միջոցառումներ:

Սահմանվեց շուրջօրյա հսկողություն, ճշտվեց խմբի անդամների ինքնությունը, կազմակերպվեցին դարանակալումներ: Կասկածյալների գործողություններին զիջելու ժամերին հետեւելու և արձանագրելու համար օգտագործվեցին նաև տեխնիկական հատուկ միջոցներ և գիշերային տեսանկարահանող սարքեր:

Էջ 4

Սպանության փորձ Մալաթիայում


Ապրիլի 5-ին ոստիկանության Մալաթիայի բաժնում հաղորդում ստացվեց, որ Անդրանիկի փողոցի շենքերից մեկում մի տղամարդու վրա կրակել են, որը վնասագերծել է կրակողին:




Օպերատիվ խումբը մեկնեց նշված հասցե: Մինչ այդ, դեպքի վայր հասան շրջիկ ծառայություն իրականացնող պարեկային ոստիկանները: Նրանք վնասագերծված տղամարդուն Հարություն Սարգսյանին, բերման ենթարկեցին ոստիկանության Մալաթիայի բաժնի: Պարզվեց՝ Հարություն Սարգսյանը թմրուկավոր ատրճանակով կրակել էր 40-ամյա տղամարդու ուղղությամբ, որը վնասագերծել էր կրակողին: Ոստիկանների ժամանելուց հետո հրազենային վնասվածքներ ստացած տղամարդը «շտապօգնության» մեքենայով տեղափոխվեց հիվանդանոց: Հարուցվել է քրեական գործ:

Հայտնաբերվեց սահմանային անցակետում

Գուլպաների մեջ պահել և ՀՀ սահմանով տեղափոխել էր ապօրինի ձեռք բերված հոգեմեղմամբներ Լյուրեր: Էջ 2

Երվյալ խարդախը

Չգիտեր, որ ծանոթուհին նախկինում խարդախության համար երկու դատվածություն է ունեցել: Էջ 6

Հանցագործություններ առանց սահմանի

Գիշերային ծառայություն իրականացնող օպերատիվ խումբը բռնեց գողությունից ռոպեներ անց: Էջ 7

Չարաշահումներ ջրօգտագործողների ընկերությունում

Ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչության կողմից շարունակվում է տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների հակազդման վարչությունում ստացված օպերատիվ տվյալներն իրացնելով «Կոտայք» ջրօգտագործողների ընկերությունում բացահայտվել են մի շարք չարաշահումներ:



Մասնավորապես, 2017-2018 թթ. ընկերության տնօրինությունը, օգտվելով ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային կոմիտեի իրավասու աշխատակիցների կողմից իրենց ծառայության նկատմամբ անբարեխիղճ վերաբերմունքի և կառավարության համապատասխան որոշմամբ սահմանված ապօրինի ջրամատակարարման ու ջրօգտագործման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու պարտականությունները ոչ պատշաճ կատարելու արդյունքում ստեղծված հնարավորություններից, խախտել է բաժանորդների հետ կնքված ջրամատակարարման ծառայություններ մատուցելու վերաբերյալ պայմանագրերի ելակետա-

ների հասույթի գումարների հաշվին եւ այդ տվյալները ներառել էլեկտրոնային մատյաններում փաստացի ուժեղացնելով մատուցված ծառայությունների ծավալները: Արդյունքում բաժանորդների կողմից ընկերության հանդեպ ունեցած դեբիտորական պարտքի հաշվեկշիռը ծանրաբեռնել է ընդհանուր 263 միլիոն 580 հազար դրամով:

Բացի այդ, կազմակերպության տնօրինությունը, օգտագործելով պաշտոնեական դիրքը, 2017-2018 թթ. ընկերության տրանսպորտային միջոցների լիցենզիայի վերաբերյալ ընկերությունում մուտքագրելով շահագործման նպատակով բաշխված ավտոգազի, բենզինի և դիզելային վառելիքի վերաբերյալ իրականությանը չհամապատասխանող, կեղծ տվյալներ, յուրացման կամ վատման եղանակով հափշտակել է, նյութերի նախապատրաստման տվյալ փուլում պարզված, առանձնապես խոշոր չափերի շուրջ 4 միլիոն դրամ:

Ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչությունում հարուցվել է քրեական գործ, որն ուղարկվել է քննչական կոմիտե:

Նարեկ ՍԱՐԳՅԱՆ

Գրեթե 100 միլիոնի վնասում է հարուցել



Մարտի 28-ին ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչության թմրամիջոցների անօրինական շրջանառության դեմ պայքարի վարչության և Արաբկիրի բաժնի ծառայողները, համագործակցելով ազգային անվտանգության ծառայության աշխատակիցների հետ, Կիւնյան փողոցում հայտնաբերեցին ու ոստիկանության Արաբկիրի բաժնի բերման ենթարկեցին Ալեքսանդր Եղիազարյանին, կասկածանքը՝ թմրամիջոց եւ հոգեներգործուն կայտեր ձեռք բերելը, պահելն ու օգտագործելն էր:

Եղիազարյանի մոտ եղած ծրարում, որը Գերմանիայից ստացել էր փոստային առաքումով, հայտնաբերվեց դեղնականաչավուն չորս հաբ: Ըստ տեղեկությունների՝ դրանք նոր սերնդի էքստազի հոգեներգործուն կայտեր են: Փորձաքննությանը պարզվել է, որ հայտնաբերվածն առանձնապես խոշոր չափերի MTMA հոգեներգործուն կայտեր է՝ էքստազի տարատեսակ:

Քրեական գործ է հարուցվել: Ալեքսանդր Եղիազարյանին մեղադրանք է առաջարկվել:

Քրեական գործ է հարուցվել: Ալեքսանդր Եղիազարյանին մեղադրանք է առաջարկվել:



Մարտի 26-ի գիշերը Կենտրոն վարչական շրջանում կողոպուտ կատարվեց: Մաշտոցի պողոտայի դեղատոմսերից մեկի աշխատակցուհին ահազանգեց ոստիկանություն և հայտնեց, որ դիմակավորված անձ է մտնել դեղատոմսերից մեկի աշխատակցուհին համապատասխան վերաբերյալ:

Ոստիկանության Կենտրոնական բաժնի ծառայողներից բացի, հանցագործության բացահայտմանը ներգրավվեցին նաև ոստիկանության Երևան քաղաքի վարչության քրեական հետախույզության բաժնի ծառայողները: Նրանք էլ օպերատիվ փոխազդեցությամբ կողոպուտը կատարելու մեջ կասկածվող անձին ինքնուրույն վերաբերյալ:

Համագործակցված աշխատանքի շնորհիվ հանցագործությունը բացահայտվեց հաջորդ օրը՝ մարտի 27-ին: Քրեական հետախույզները Երևանի Մամիկոնյան փողոցում հայտնաբերեցին ու կասկածանքով ոստիկանության Կենտրոնական բաժնի բերման ենթարկեցին Վանաձորում հաշվառված Տիգրան Աղաջանյանին:

26-ամյա երիտասարդին Կենտրոնականի ոստիկանները ներկայացրել են դեպքի նախաքննությունը վարող մարմնին: **Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ**

Համաներմամբ ազատվածը



Բացահայտման աշխատանքներին միացան նաև ոստիկանության Երևան քաղաքի վարչության քրեական հետախույզները, և հետևողական աշխատանքը դրական արդյունք տվեց:

Կենտրոն վարչական տարածքում բնակարանային գողության և գողության փորձի դեպքեր էին կատարվել: Մարտի 11-ին փորձել էին բացել Սայաթ-Նովայի պողոտայի շենքերից մեկի բնակարանի դուռը, բայց, ինչ-ինչ հանգամանքներից ելնելով, չէր հաջողվել: Օրեր անց՝ մարտի 18-ի երեկոյան, թունանյան փողոցի շենքերից մեկի բնակարանից բջջային հեռախոս էին հափշտակել:

Շուտով տեղեկություններ ստացվեցին, որ նշված հանցագործությունները հնարավոր է կատարած լինի Երվանդ Քոչարի փողոցի բնակիչ Մխիթար Միքայելյանը:

Օպերատիվ տեղեկություններն իրացնելով՝ մարտի 29-ին Լեհինգրադյան փողոցի շենքերից մեկից կասկածյալը բերման ենթարկվեց ոստիկանության Կենտրոնական բաժնի:

Նշենք, որ Մխիթար Միքայելյանը համաներմամբ վերջերս է ազատվել քրեականատրոհական հիմնարկից:

Նախաքննությունը շարունակվում է:

Գողություն

Ապրիլի 3-ին մի բնակչուհի ոստիկանության Մուշի բաժնում հարդորում տվեց, որ քրոջ տնից գողություն է կատարվել: Տանտերերը Ռուսաստանի Դաշնությունում էին, և հանցամիտները հենց այս հանգամանքից էլ օգտվել էին: Հանել էին պատուհանի ճաղակները, հարմարեցված գործիքով բացել պատուհանը, տնից հափշտակել կենցաղային իրեր, բարձրախոսներ, խմիչք, ավտոտնակից՝ աշխատանքային ու շինարարական գործիքներ:



Գողությունը կատարած անձին և գողությանը հայտնաբերելու ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների արդյունքում քրեական հետախույզները տեղեկություններ ստացան, որ հանցագործությունը հնարավոր է կատարած լինի Գյումրիի Խանոյան փողոցի անչափահաս բնակիչ Արթուրը: Նույն օրը նա բաժնի հրավիրվեց, որտեղ պարզվեց, որ Արթուրը գողությունը կատարել է ներկայումս Ռուսաստանի Դաշնությունում գտնվող ընկերների հետ՝ 2018 թվականի աշնանը:

Գողորը հայտնաբերվել է և առգրավվել է: Նախաքննությունը շարունակվում է:

Գոռ ՎԱՆՅԱՆ

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի և նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնական դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Table with 10 columns and 15 rows containing astrological symbols and text. Includes a small image of numbered balls in the bottom left corner.

Ուշադրություն (Attention) section with a logo and text. Title: Հարգելի քաղաքացիներ. Text: ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչությունը...

Կեսիկ - Մարդկանց հետ շփումը անսովոր հեշտ կստացվի: Գրանից ելնելով կարող եք պլանավորել գործնական հաղիվածները:

Մարդագիտական 12.04 - 13.04. Աղեղնավոր - Վերջապես հոգեկան հավասարակշռություն կգտնեք, ինչը վերջին շրջանում ձեզ մոտ չէր ստացվում:

Այծեղջյուր - Եթե միայնակ եք, սպասում է հաճելի ռոմանտիկ ծանոթություն, իսկ եթե գուզը կարող եք հարաբերությունները:

Փորձեք լուծել (Solve the puzzle) section with two chessboard puzzles. խնդիր N1 and խնդիր N2. Includes solutions and a small text block.

Նախորդ համարի սկզբնական պատասխանները (Answers from the previous issue) section with a grid of numbers and a small image of a man.

«02 շաբաթաթերթ» ՓԲԸ: Հասցեն՝ Նալբանդյան-130: Հեռ. 56-00-05, 54-81-52, 59-67-75 (հաշվապահություն): Համարի թողարկման պատասխանատու՝ Ն. Աբաբեկյան: Գրանցման վկայական 27312002739: Տրվել է 13.03.2000 թ.: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ: Ստորագրված է տպագրության 11.04.2019 թ., ժ. 17.00-ին: Տպաքանակը՝ 6950: Համակարգչային շարվածքը՝ «02» շաբաթաթերթի: Տպագրվել է «Հենակետ» ՓԲԸ տպարանում: Հղումը՝ «02»-ին պարտադիր է: Զպատվիրված նյութերը չեն գրախոսվում և չեն վերադարձվում: Խմբագրությունը հեղինակների հետ գրագրություն չի վարում: Գովազդի պատասխանատու պատվիրատուն է: